

կանաց շարքին մէջ կը յիշուին նաև Հայեր: Նոյն Յուլեանկին մէջ մասնաւորապէս կը յիշատակուէի Հայոց Ս. Յովնաննու Կարապետի վանքը, ուր կը բնակէին վեց հայ կրօնաւորներ: Անոնք անցելոյն բարգաւաճ վիճակի մը բեկորներն էին, որ անտարակոյտ արեւելքէն եկող յարձակողներուն խժոժութենէն ազտած՝ կը փափաքէին դարձեալ պայծառացնել Ս. Կարապետի վանքը, նորոգելով աւերեալ մասերը: Օտար յիշատակարանի մը այս անհրաժեշտ վերաշինութիւնը՝ Հայոց Ս. Յովն. Կարապետի վանքին գոյութեան մեծ ապացոյց մըն է: Հաւանական կ'երեւի որ՝ նոյն վանքը մինչև ժ. Բ. դար կանգուն մնացած է, և ի վերջոյ Սալահէտինի յարձակումներէն դարձեալ քանդուած ու յիշատակներն ալ երկար դարեր հողի տակ ծածկուած են: Ժ. Բ. դարու կիսուն էր որ Զիթենեաց լերան Հայոց Ս. Յովնանու Կարապետի վանքին նախկին պայծառութեան չքնաղ յիշատակարանները հողերու տակէն դուրս կու գային հիացումի ենթարկելով բոլոր տեսողները հայկական չորս արձանագրութիւններով գեղակերտ խճանկարներ (mosaïque) երբեմն կը զարդարէին Ս. Կարապետի վանքին յատակը: Այս յիշատակարանները կ'ապացուցանեն թէ՛ որպիսի պայծառութեան մը հասած էր նոյն վանքը: 1868էն սկսեալ, զանազան գիրքերու և լրագրաց մէջ քանիցս հրատարակուած և լուսանկարուած են նոյն արձանագրութիւնները և խճանկարները: Անցեալ տարի ալ, Գեր. Տ. Մեսրոպ Ս. Եպս. Նշանեան՝ Երուսաղէմայ Դամասկոսի դրան մօտի հայկական խճանկարի մէկ մանրանկարը հրատարակելուն առթիւ, Զիթենեաց լերան հայ արձանագրութիւններն ալ ամփոփած էր, (Տէ'ս Տարեցոյց Թողոյի, 1927, էջ 399-406): Ս. Յովն. Կարապետի վանքին արձանագրութիւնները քաղելով նոյնէն կը գնենք հոս.

1.— «Բարեխաւս ունեղով
առ Ասուած զսուրբ Ե
սայի եւ գերանելի
հարսս եւ Վարսնսս
րարի վասն բողոս
քեան մեղաց գլխի
շատկարանս զայս»:

2.— «Այս դիւ երանելոյ Շուշանկա
մաւրն Արդաւանայ Հոռի ժը»: